Այս նույն հարկը Էրզանիի կանուն-նամեում հայտնի է նաև «ռեսմ-ի մուշակ» („Resm-i muşak") անվան տակ: «Մուշակ»-ը հավանաբար հայերեն մշակն է, որովհետև նույն կանուն-նամեում ասված է, որ դա գանձվում է հայերից, իսկ մուսուլմաններից չի գանձվել[1]:

«Ռեսմ-ի մուշակը» կամ տարեկան վեց օր ծառայություն էր, կամ 24 ակչե հատուցում[2]:

«Ռեսմ-ի մարհասիե» („Resm-i marhasiye")՝ քրիստոնյա հոգևորականությանը հարկերից «մուաֆ» կամ «մուսալլեմ» (ազատ) թողնելու համար քրիստոնյա հպատակներից գանձված հարկի անունն է:

Կամախի կանուն-նամեում ասված է, որ Կամախի կազալի (փոքր վարչական միավորում) հայերին նշանակված է 11 հազար ակչե, իսկ Էրզնջանին՝ տարեկան 8 հազար 250 ակչե, այնպես որ յուրաքանչյուր տնից գանձվել է 15 ակչե «ռեսմ-ի մարհասիե»: Տեղի հայերը բողոքել են Բ. Դռանը, նշելով, որ «Սա ևս մեզ համար մի ավելորդ խարաջ եղավ»[3]: Իսկ Գյուրջիստանի կանուն-նամեում ասված է, որ Գյուրջիստանի վիլայեթում «մարհասիե» ասելով յուրաքանչյուր անձից երկուական ակչե է գանձվել[4]:

ԱՌԵՎՏՐԻՑ ԳԱՆՁՎՈՂ ՀԱՐԿԵՐԸ

Արևմտյան և Հարավային Հայաստանի քաղաքները (Վան, Էրզրում, Կամախ, Երզնկա և այլն) 16-րդ դարում հանդիսանում էին առևտրա-արհեստագործական կենտրոններ: Եվ պատահական չէ, որ այս վիլայեթների կանուն-նամեները հիմնականում նվիրված են առևտրից գանձվող հարկերի թվարկմանը:

Այս փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պետությունը փաստորեն հարկ էր վերցնում համարյա բոլոր՝ ինչպես տեղում ծախվող, այնպես էլ տրանզիտային ապրանքներից:

Այս հարկերը հիմնականում հայտնի են «բաջ», «բաջ-ի բազար» (bac-i bazar), «բաջ-ի թամղա» (bac-i tamga), «թամղա-ի սիահ» („tamga-i siyah»), «բաջ-ի բուզուրգ» („bac-i buzurg")՝ «իհտիսաբ ռեսմի» („ihtisap resmi"), «մուհտասիբ-ի էհտիսաբիե» (muhtesib-i ihtisabie) և այլ տերմիններով: Այս հարկերի նշանակումը վերագրվում է Ակ-կոյունլուների տիրակալ Ուզուն Հասանին:

Օմեր Լութֆի Բարքանը իր «Օսմանցիների ժամանակ Ակ-կոյունլու տիրակալ Ուզուն Հասան բեկին վերաբերող օրենքները» հոդվածում տալիս է այս տերմինների հետևյալ բացատրությունը:

«Բաջ բառը ընդհանրապես հարկ իմաստով է օգտագործված: «Բաջ-ի թամղա» (կնիքի) հարկ ասել է: Թամղայի նշանակությունը պարզ է. քաղաքում առնվող ու ծախվող ամեն տեսակի ապրանքներից, գործված կերպասից և մորթված կենդանիներից գանձվող հարկի անունն է: Սրան մեծ մասամբ սև կնիք («թամղա-ի սիահ») ևս կասվի: Տրանզիտ կերպով երկրից անցնող և կամ թե երկրում մնալու համար բերված ապրանքներից գանձվող մաքսա-

---

[1] Defter-i yasaha liva-i Ergani, 151.

[2] Տույն տեղում:

[3] Տե՛ս, Fasl-i tamga-i siyah-i kaza-i kemah ve Erzincan, s. 187.

[4] Gürcistan kanunnâmesi, s. 199.